# ՏԵՂԵԿԱԳԻՐ

# ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1911 Թ.

## ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Էլեկտրաշարժ տպարան օր. Ն. Աղանեանցի, Պօլից 7.
1 9 1 2

902.7
2-28

06 JUN 2013

−5 OCT 2011

ՀԱԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библ.
7/XI 1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

370
Ձ314-ՏՆ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

*1911 Թ. գործունէութեան*

Ներկայ հաշուետուական տարում ընդհանուր ժողովը պատուաւոր անդամ ընտրեց Մոսկուայի կայսերական հնագիտական ընկերութեան նախագահուհի կոմսուհի Պրասկովիա Սերգեեվնա Ուվարովային, ներկայացուցիչներ ուղարկեց Պ. Գէորգեանին և Դեմիրչեանին շնորհաւորելու պ. Շիրվանզադէի գրական և պ. Գէորգ Մելիք-Կարագեօզեանին՝ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. եռեսնամեայ գործունէութեան յոբելեանները:

Ընկերութիւնը ներկայ հաշուետուական տարում ունեցաւ հետևեալ գործունէութիւնը.

I. Հրատարակեց Ազգագրական Հանդէսի XXI գիրքը.

II. Հարստացրեց իւր Ազգագրական-Հնագիտական Թանգարանը.

III. Հարստացրեց իւր Կովկասագիտական-Մարդաբանական գրադարանը:

IV Կազմակերպեց դասախօսութիւններ:

V. Նպաստեց գիտական արշաւանք կատարելու:

### I. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Թէպէտ համարւում է եռամսեայ հանդէս, սակայն ընկերութեան միջոցների չափազանց սղութեան պատճառով այս 1911 թուին հրատարակուեց միմիայն մի գիրք: Հանդէսի այսպիսի անկանոն կերպով հրատարակուելը չափազանց ազդում է նաև բաժանորդագրութեան վրայ:

Այս XXI գրքի հիմնական յօդուածներն են.

Գաւիթ կամ ժամատուն, Թ. Թօրամանեանի.

Ֆօլկլօրի Միջազգային դաշնակցութիւն, Խ. Սամուէլեանի.

Վասպուրականի նշանաւոր վանքերը, Ե. Լալայեանի.

Վասպուրականի բանաւոր գրականութիւնից, Ե. Լալայեանի.

Ծիսական կարգերը Հայոց մէջ, Ե. Լալայեանի.

Տիգրան Մեծի դրամները, Ատրպետի.

Կոմսուհի Պ. Ս. Ուվարովա, պատուաւոր անդամ Հայոց Ազգագրական ընկերութեան, Ս. Տէր Աւետիսեանի.

Մատենախօսութիւն.—Ղուկասեան մատենադարան Ե. Լ. «Նաղաշ Յովնաթան» Զօրանեանի, Գ. Լևոնեանի. Հայ աշուղներ Տ. եպ. Պալեանի, Գ. Լևոնեանի.—«Этнографическое Обозрѣніе», Խ. Սամուէլեանի։

## II. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ-ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Այս տարի և Խորհուրդը դառնութեամբ դիտել է, թէ ինչպէս մեր երկրի բազմաթիւ հնութիւնները վանդալական ձևով ոչնչացնում են, օտար երկրացիներին ծախում, անհետ կորչում... և միայն տ. Հայկանոյշ Մարտիրոսեանի նուիրած մի հարիւր րուբլիով Ե. Լալայեան գնել է ազգագրական և հնագիտական իրեր Վասպուրականում ճանապարհորդելիս։ Այս իրերն են.

Շատախեցի հայ աղջկայ բոլոր հանդերձները, գլխի արծաթէ յարդարանքները (թաս), վրայի զարդերը, կեղծ ծամերը։

Չորս բևեռագիր կնիք.

Երկու բրոնզէ արձան.

Շատախի շալ գործելու բոլոր գործիքների մոդէլները.

Աղէքսանդր Մակեդոնացու և 14 այլ դրամներ.

Մի գեաւիկ.

Մի գօտիկ.

Մոքսի և Շատախի ագանելիքներ.

Երկու ասորական գտակ.

Սիւրմա պատրաստելու թաս.

Ասեղնագործ 6 թաշկինակ.

Արծաթէ մանեակ.

Բացի սրանից թանգարանը նուէր է ստացել հետևեալ իրերը.

Խ. Կանայեանից բիւզանդական երկու և արաբական մէկ պղնձէ դրամ.

Մ. Մխիթարեանից. մի քարացած տերև, մի քարացած կեղև. 2 արծաթէ և երկու պղնձէ դրամ.

Հ. Մարգարեանից 75 կտոր բրոնզէ իրեր, որ գտնուած են Նոր Բայազէտի գաւառի Բեօլադան գիւղի շրջակայքում.

Ե. Ջանփոլադեանից. Հին Նախիջևանի աղահանքում գտնուած 9 կտոր բրածոներ։



Շ. Ծ. Վ. Սահակեանից. Աղէքսանդր Մակեդոնացու մի փոքրիկ արծաթէ և այլ նոյնպէս արծաթէ դրամ (Ամիսոս)։

Ս. Տէր Աւետիսեանից. 2 պղնձէ դրամ, Թիֆլիսում և Անիում կտրուած, արաբական տառերով։

## III. ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ-ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ.

Գրադարանը այժմ զետեղուած է Լերմոնտովեան փողոցում, էջմիածնապատկան տանը, № 1, երկրորդ յարկում. բաց է գիտութեամբ պարապողների համար առաւօտուայ ժամը 8-ից մինչև գիշերուայ ժամը 12 անընդհատ, իսկ ընկերութեան անդամների համար առաւօտուայ ժամը 9—2 և 4—8 երեկոյեան։

Պատասխանատու գրադարանապետուհի հաստատուած է տ. Հայկանոյշ Լալայեան, որ յանձն է առել ձրիաբար։

Խորհուրդը որոշել է ձեռք բերել գրադարանի համար հայ պարբերական մամուլն ամբողջապէս, որպէսզի հնարաւորութիւն տայ Կովկասի մտաւոր կենտրոն՝ Թիֆլիսում աշխատողներին՝ կատարելապէս օգտուելու, և այս նպատակով էլ Ե. Լալայեանի և Խ. Սամուէլեանի կազմած պարբերական մամուլի բովանդակութեան ցանկը մինչև հրատարակուիլը դրուած է գրադարանում, պարապողներին դիւրութիւն տալու։

Հաշուետուական տարուայ սկզբում գրադարանում կար 1924 կտոր գիրք, իսկ տարուայ վերջում 2287 ուրեմն գրադարանը հարստացել է միայն 363 կտոր գրքով։

Ընկերութեան միջոցներով շատ քիչ գիրք է գնուած, այլ միայն փոխանակուած են Ազգագրական Հանդէսների հետ և կամ նուէր ստացուած։

Գրադարանում 1911 թուին ստացուել են հետևեալ 44 հրատարակութիւնները՝ փոխանակուելով Ազգագրական Հանդէսի հետ։

Ախուրեան, Աղբիւր-Տարազ, Անահիտ, Աշխատանք, Արարատ, Արևելք, Արօր, Արշալոյս, Ասպարէզ, Բազմավէպ, Բիւզանդիոն, Բիւթանիա, Գեղարուեստ, Գիւղատնտես, Երիտասարդ Հայաստան, Լումայ, Խաթարալա, Կոչնակ, Հանդէս Ամսօրեայ, Հայրենիք, Հասկեր, Հորիզոն, Հովիւ, Նոր-Դպրոց, Նոր այգ, Շանթ, Մշակ, Սուրհանդակ, Վան-Տոսպ, Տաճար, Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племенъ Кавказа, Записки Кавказскаго отдѣла Имп. Русскаго Географическаго Общества, Извѣстія Кавказскаго музея, Закавказская рѣчь, Тифлисскій листокъ, Баку, Վրաց Պատմա-Ազգագրական Ընկերութեան հրատարակութիւնները, Journal Asiatique, Anthropos, Armenia, Bulletins et mémoires

de la société d' anthropologie de Paris նաև Publications de I'ecole des langues orientales vivantes։—

Գրադարանին նուիրել են գրքեր նաև հետևեալ անձերը.

Աճառեան Ա. Աշխատանք, Նոր-Աշխատանք և Անկախ Մամուլի բոլոր համարները.

Աղանեան Գ. ա. ք. 10 գիրք.

Այվազեան Բ. 4 գիրք իր երկերից.

Արծրունի Վ. բժ. Reclus Nouvelle geographie universelle. Ш. IV, VI, VII, VIII և IX հատորները։

Ատրպետից 18 գիրք, որոնց թւում իր բոլոր երկերը։

Բաքայեան Լ. Հայերը Մոլդավիայում և Բուքովինիայում Թիֆլիս. 1911 թ.

Գալստեան Գ. Գուտտեմբերգ գրախանութի հրատարակութիւնները 40 կտոր։

Գէորգեան Մ. Арменія въ эпоху Юстиніана, Адонца.

Դոլուխանեան Նունէ. Ալիշանի Սիսականը և «Մուրճ».

Երզնկեան Ե. ա. ք. «Հովիւ» շաբաթաթերթի 1906, 1907 1908 թուերի տարեկանները.

Երիցեան Ա. Խաթաբալայ 6 տարուայ

Երիցեան Գ. «Կայծեր» օրագրի բոլոր համարները.

Թօրամանեան 1 գիրք.

Թոփչեաններ 10 գ.

Իփակեան Մշակի և Հորիզոնի 4 տ. համարներ։

Ե. Լալայեան 151 կտոր գիրք, որոնց մէջ Ալիշանի Հայապատումը, Ղազիկեանի Հայկական մատենագիտութիւնը, Исторія искусства Вёрмана, Народи земли Острогорскаго, Исторія арнаментики.

Լեւոնեան 3 գիրք.

Խանազատ 3 գ. իր երկերից.

Կանայեան 1 գիրք.

Կ. Հ. Բ. Ընկ. երեսնամեակի Լէօի կազմած պատմութիւնը.

Կենտրոնական գրավաճառանոց 40 գիրք.

Ղուկասեան Ճայուն յանձնաժողով. 3 գիրք.

Մարտիրոսեան Հայկանոյշ 20 գիրք.

Մարտիրոսեան Ռուբէն. 5 գիրք.

Չամալքաշեան. 3 գիրք և Երկրագունտ ամսագրի 1884—1888 թ. թ.

Պետրովիչ Arsaciden—Mungen, Katalog.

Մելիքսեդ-բէկեան 5 գիրք իր երկերից.

Սամուէլեան Ստ. ք. 4 գիրք.



Սոլովեան Յ. 4 գր. իր երկերը.

Սքորչիկեան Տ. 1 գ.

Վարդանեան տպարանատէր 21 գիրք.

Պ. Քալանթարեանից 1 գիրք.

Տէր Կարապետեան. Խաչատուր Աբովեան բ. տիպ. 1911.

Տէր Ղեւոնդեան. Դարբին շաբաթաթերթի բոլոր համարները։

Ֆէթվաճեան 1 գիրք.

Տ. Հ. Մարտիրոսեան այս տարի ևս նուիրել է գրքերի մի պահարան, երկուսն էլ գնուած են ընկերութեան հաշուով։

## ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Տեղի են ունեցել 17 դասախօսութիւն.

1) Մեսրէնճեան Մամբրէ. Հայ-Ժողովրդական բանահիւսութեան զարգացումը.

2) Նոյնը. Խ. Աբովեան իբր ազգագրագէտ.

3) Տէր Աւետիքեան Սմբատ. Կոմսուհի Պ. Ուվարովայի գիտական գործունէութիւնը։

4) Յովսէփեան Գ. Վարդապետ. Մանրանկարչութիւնը Հայոց մէջ։

5) Նոյնը. Պռօշեանց շրջանի մանրանկարչութիւնը։

6) Սարուխան. Տաճկահայոց սահմանադրութեան ծագումն ու զարգացումը։

7) Ատրպետ. Պարսից և Հայոց Արշակունիների դրամները։

## V. ԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՒԱՆՔ

Ընկերութեան սուղ միջոցները թոյլ չտուին գիտական արշաւանք կազմակերպելու, այլ միայն փոքրիկ չափով նպաստեց արժ. Գարեգին վրդ. Յովսէփեանին՝ Երուսաղէմ մեկնելու՝ Հայ ձեռագրների մանրանկարները ուսումնասիրելու։ Այս չնչին գումարն էլ ձեռք էր բերուել ընկերութեանս հրապարակական նիստում արժ. հօր կարդացած դասախօսութիւնից։

# Հ Ա Շ Ի Ւ

## ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

### *1911 թ. ընդհանուր մուտքի և ելքի*

### ՄՈՒՏՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ԴՐԱՄԱՐԿՂ** | | | | |
| *Մնացորդ առ 1 յունուար 1911 թ.* | | | 16 | 55 |
| **ԱՆԴԱՄԱԿՑԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ** | | | | |
| *Տարեկան . . . . . . . .* | 102 | | | — |
| *Մշտական . . . . . . . .* | 615 | | 714 | |
| **ՆՈՒԷՐՆԵՐ** | | | | |
| *Խունունց Մնացականից . . .* | 50 | | | |
| *Տ. Մարտիրոսեան Հայկանուշից .* | 125 | | | |
| *Մելիք-Ազարեան Աղեքսանդրից .* | 200 | | 375 | — |
| **ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ** | | | | |
| *Բաժանորդագին և հատավաճառ .* | 51 | | 51 | |
| *Պարտք է վերցրած . . . .* | | | 347 | 25 |
| **ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ** | | | | |
| *Տոմսակների վաճառումից . .* | | | 124 | 50 |
| | | | 1631 | 30 |

### ԵԼՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ԳՐԱԴԱՐԱՆ** | | | | |
| *Սենեակների վարձ . . . .* | 395 | — | | |
| *Արտիստիկական ընկ. դահլիճի համար առհաւատչեայ . . .* | 50 | | | |
| *Պոստի ծախս . . . . . . .* | 13 | 74 | | |
| *Այլ և այլ ծախսեր . . . .* | 34 | 75 | 493 | 49 |
| **ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ** | | | | |
| *Տպագրութիւն, թուղթ, հոնորար.* | | | 706 | 85 |
| **ՇԱՐԺԱԿԱՆ ԿԱՅՔԵՐ** | | | | |
| *Կլիշաներ . . . . . . .* | 77 | 28 | | |
| *Կազմեր . . . . . . .* | 35 | — | | |
| *Պահարաններ և այլ շարժական կայքեր . . . . . . .* | 94 | 18 | 206 | 46 |
| **ԹԱՆԳԱՐԱՆ** | | | | |
| *Ազգագրական և հնագիտական իրեր են գնուած . . . .* | | | 100 | |
| **ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ** | | | | |
| *Դահլիճի վարձ և այլ ծախսեր .* | 68 | 30 | | |
| **ԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՒԱՆՔԻ** | | | | |
| *Արժ. Գարեգին վարդապետին .* | 56 | 20 | 124 | 50 |
| | | | 1631 | 30 |

# ՆԱԽԱՀԱՇԻՒ

## ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

### 1912 թ. գործունէութեան

### ՄՈՒՏՔ

| | | |
|---|---|---|
| 10. | Մշտական անդամավճար | 1000 ր. |
| 30. | Բաժանորդ-անդամներից | 180 » |
| 10. | Անդամ 2-ական ր. | 20 » |
| | Հանդէսի բաժանորդագրութիւնից | 300 » |
| | Հանդէսի վաճառումից | 150 » |
| | Մանթաշեանի նուէրը | 1000 » |
| | Օպերայից | 1000 » |
| | Նուէրներ | 500 » |
| | | 4150 ր. |

### ԵԼՔ

| | |
|---|---|
| Ազգագրական Հանդէսի XXII և XXIII գրքերի հրատարակութեան | 1500 ր. |
| Գրադարան-Թանգարանի սենեակների վարձ | 420 » |
| Հնագիտական իրեր գնելու | 600 » |
| Գրքեր գնելու և կազմելու | 600 » |
| Պարտքի հատուցում | 847 » |
| Փոստի և մանր ծախսեր | 183 » |
| | 4150 ր. |

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՃԻՒՂԵՐԸ

Ընկերութեան գրեթէ բոլոր՝ Կարսի, Ալէքսանդրապոլի, Երեւանի, Նոր-Բայազէտի և Ախալքալաքի ճիւղերը այս 1911 թուին չափազանց թոյլ գործունէութիւն են ունեցել։

Թէպէտև նրանց առաջարկուած է հաւաքել իրենց շրջանի ժողովրդական բանահիւսութիւնից ու հրատարակել «Պառաւաշունչ» ընդհանուր խորագրով, սակայն մինչև այժմ միայն Ախալքալաքի ճիւղն է կատարել այս առաջարկը։ Ալէքսանդրապոլի ճիւղը, թէպէտ կարող էր մեծ գործունէութիւն ունենալ, սակայն բաւականացել է միայն քաղաքային վարչութիւնից մի սենեակ ստանալով հիմ դնել Շիրակի հնագիտական-ազգագրական թանգարանին, ուր արդէն հաւաքուած են թէև քիչ, բայց գնահատելի իրեր։

Կարսի ճիւղն էլ առ այժմ գնել է մի պահարան և հաւաքել Կարսի շրջանին վերաբերեալ հնագիտական իրեր և գրքեր։ Խորհրդիս տնօրինութեամբ պ. Ե. Լալայեան այցելեց Ալէքսանդրապոլի, Կարսի և Երևանի ճիւղերին, յորդորեց գործելու, սակայն ի զուր։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Имени А. Мясникяна
*Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ*

## ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ 1911 Թ.

I. Հովանաւորող անդամներ

† Նորին Վեհափառութիւն ՄԿՐՏԻՉ կաթողիկոս ամենայն Հայոց։
† Նորին Վեհափառութիւն ՄԱՏԹԷՈՍ Բ. կաթողիկոս ամենայն Հայոց.

II. Պատուաւոր անդամներ

Ակադեմիկ Նիկողայոս Եակովլեւիչ Մառր.
Ալէքսանդր Մելիք-Ազարեան.
Կոմսուհի Պրասկովիա Սերգեեվնա Ուվարովա։

III. Մշտական անդամներ

### Ա. ԹԻՖԼԻՍՈՒՄ

1. Ամիրխանեան Յովսէփ.
2. Առաքելեան Գրիգոր.
3. Աստուածատրեան Գէորգ.
4. Աստուածատրեան Միքայէլ.
5. Արծրունի Վահան.
6. Ալխասեան Եզնիկ քահանայ.
7. Աֆրիկեան Խաչատուր.
8. Բարխուդարեան Արշակ.
9. Գէորգեան Մամիկոն.
10. Գէորգեան Նունէ.
11. Զարգարեան Արիստակ. բժ.
12. Զարգարեան Աւետիս.
13. Զարդեղեան Զաքար քահ.
14. Թայիրեան Հռիփսիմէ մայրապ.
15. Իշխ. Թումանեան Մարիամ.
16. Թումանեան Յովհաննէս.
17. Թոնեան Սրտաշէս.
18. Իւզբաշեան Մովսէս.
19. Լալայեան Երուանդ.
20. Լալայեան Հայկանոյշ.
21. Խարազեան Սարգիս.
22. Խունունց Գայիանէ*).
23. Խունունց Մնացական.
24. Ծատուրեան Եփրեմ.
25. † Կարա-Մուրզա Յովսէփ.
26. Կարապետեան Յովհաննէս.
27. Կոյեալեան Միքայէլ.
28. Հայրապետեան Աբիսող. բժ.
29. Մարտիրոսեան Հայկանոյշ.
30. Մարտիրոսեան Ռոստոմ.
31. Մարտիրոսեան Ռուբէն.
32. Մարտիրոսեան Լեւոն
33. Մամուլեան Զաքարիա.
34. Մանուէլեան Ստեփան.
35. Մելիքեան Համբարձում.
36. Մէլիք-Ազարեան Աղէքսանդր.
37. Մէլիք-Ազարեան Արփենիկ.
38. Մէլիք-Կարագեօզ. Գէորգ.
39. Մեհրաբեան Արամ.
40. Մեսնիկեան Գրիգոր.
41. Յարութիւնեան Սամսոն.
42. Յովհաննիսեան Շուշանիկ.
43. Նունուֆարեան Նատալիա.
44. Նունուֆարեան Սարգիս.
45. Շիրինեան Կարապետ.
46. Շխեան Սիմէօն.
47. Չաթալբաշեան Յովակիմ.
48. Չիլինգարեան Գէորգ.
49. † Պռօշեան Պերճ.
50. Ջաղէթեան Աղէքսանդր.
51. Վարդազարեան Փիլիպպոս.
52. Վարդանեան Մարտիրոս.
53. Սամուէլեան Խաչատուր.
54. Սրբոբջեան Վաղարշակ.

*) Ընդգծածները վճարել են հարիւրական րուբլի, միւսները խունական։

55. Սերեբրիկեան Յովհաննէս.
56. Սերեբրիկեան Նունէ.
57. Սողոմոնեան Սրբուհի.
58. Ստեփանեան Յակովբ.
59. Քալանթարեան Սոփիա.
60. Քալանթարեան Յովհաննէս.
61. Քալանթարեան Մկրտիչ.
62. Քարիմեան Համբարձում.
63. Տէր Մարգարեան Գասպար.
64. Փրիդոնեան Գրիգոր.

## Բ. ԲԱԳՈՒՈՒՄ

65. Ադամեան Յովհաննէս.
66. Ադամեան Հեղինէ.
67. Ասլանեան ոսկի.
68. Ասլանեան Սամուէլ.
69. Արամազդ ընկ.
70. Բուդուղեան Արսէն.
71. Գասպարեան Արշաւիր.
72. Թումանեան Արշակ.
73. Թումանեան Եղիսաբէթ.
74. Թումանեան Մարգարիտ.
75. Թումանեան Սոփիա.
76. † Թումանեան Քրիստափոր.
77. Խաչատրեան Գրիգոր.
78. Խոջամիրեան Յակոբ.
79. Ծատուրեան Յովհաննէս.
80. Ծատուրեան Շամիլ.
81. Ծատուրեան Պատուական.
82. Կոստանեան Գեղամ.
83. Կրասիլնիկեան Հեղինէ.
84. Ղազարեան Աւետիս.
85. Շագինեանեան Իզաբէլլա.
86. Շագինեանեան Մկրտիչ.
87. Սարգսեան Եղիսաբէթ.
88. Սարգսեան Քրիստափոր.
89. Սարումեան Ներսէս.
90. Սերովբեան Բագրատ.
91. Վաչեան Աստուածատուր.
92. † Վաչեան Մարիամ.

## Գ. ԱԳՈՒԼԻՍՈՒՄ

93. Հախնազարեան Սարգիս.
94. Ներսիսեան Աւետիք.

## Դ. ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ

95. Ղլտչեան Արսէն
96. Շաթիրեան Աղէքսանդր.

## Ե. ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ

97. Մութաֆեան Յովհանջան.

## Զ. ԵՐԵՒԱՆՈՒՄ

98. Երեւանի Թեմական դպրոց*)

## Է. ԵՒՏՈԿԻԱ

99. Շաւարշ Ծ. Վ. Սահակեան.

## Ը. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

100. Յովսէփեան Գ. վարդապետ.

## Թ. ԽԵՐՍՈՆՈՒՄ

101. Իշխ. Արղութեան Երկայնաբազուկ Պարէտ.

## Ժ. ԿԱՐՍ

102. Պապովեան Յովհաննէս.

## ԺԱ. ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ

103. Տէր Ղազարեան Իսահակ.

## ԺԲ. ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ

104. Յ. Զամփուլադեան

*) Նուէր Սմբատ Շահազիզից։



## ԺԳ. ՄՈՍԿՈՒԱՈՒՄ

105. Ժամհարեան Նիկողայոս.
106. † Շահազիզեան Սմբատ.
107. Պապովեան Եվդոկիա.

IV. 1911 Թուի տարեկան բաժանորդ անդամներ (6. ր. անդամավճարով)

1. Ալֆերիեվ Սեր. Պետրովիչ, Վանայ ռուսաց փոխ-հիւպատոս.
2. Աղանեան Գ. ա. քահ.
3. Բժ. Աղասարեան Բախշի.
4. Աւթանդիլեան Հեղինէ.
5. Բաղդասարեան Անահիտ.
6. Դօլուխանեան Նունէ.
7. Եփրեմ եպ. ժամ. կառավարիչ Թիֆլիսի Թեմի.
8. Զաւէն եպ. առաջ. Կարնոյ.
9. Թորգոմ եպ. առաջ. Սեբաստիոյ.
10. Խատիսեան Մարիամ.
11. Կարապետ եպ. առաջ. Եգիպտոսի.
12. Կաֆեան Գաբրիէլ.
13. Ղամբարեան Պօղոս.
14. Ղարաջեան Մարիամ.
15. Մարգարեան Յովհաննէս բժ.
16. Մատենճեան Մամբրէ.
17. Մելեան Վաղարշէ.
18. Յակոբեան Նունէ.
19. Նաւասարդեան Բագրատ.
20. Ջանփոլադեան Եսայի.
21. Սարուխանեան Առաքել.
22. Ստեփանոս եպ. վանահայր Կտուց անապատի.
23. Վահանեան Հմայակ.
24. Տէր-Աւետիսեան Սմբատ.
25, Տէր-Միրաքեան Յովհաննէս
26. Տէր-Յակոբեան Աւետիք.
27. Տէր-Յակոբեան Յակոբ.
28. Տէր-Ցակոբեան Ղեւոնդ.
29. Տէր-Սարգսեան Քրիստափոր
30. Փիրումեան Տիգրան.

---

## ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ Աղէքսանդր Մելիք Ազարեան.
Փոխ-Նախագահ Տ. Հայկանոյշ Մարտիրոսեան.
Գանձապահ Յովակիմ Զաթալբաշեան.
Անդամներ՝ Տ. Նունէ Դօլուխանեան
» Տ. Նունէ Ղամբարեան
» Մամիկոն Գէորգեան.
» Համբարձում Մելիքեան
» Գէորգ Մելիք-Կարագօզեան
» Քրիստափոր Տէր-Սարգսեան
Անդամ քարտուղար՝ Երուանդ Լալայեան.

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Նախագահ՝ Երուանդ Լալայեան.
Փոխ-Նախագահ՝ Աւետիք Տէր-Յակոբեան.

Հայաստանի Ազգային գրադարան
NL0420026

Անդամներ. Գիւտ ա. ք. Աղանեան.
» Դերենիկ Դեմիրչեան.
» Խաչիկ Սամուէլեան
» Մամբրէ Մատէնճեան.
» Սմբատ Տէր-Աւետիսեան.
Անդամ-քարտուղար՝ Գարեգին Լեւոնեան։

ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ.

Անդամներ՝ Սարգիս Խարագեան.
» Զաքարիա Մամուլեան.
» Կարապետ Շիրինեան։

19.720

902.7
Σ-28